

## ԲՍՆԸԿՆ Ի՞ՆՉՊԻՍ ԱԶԸՏԵՑԻ

(Հտիբէն Ժերարի արկածներից)։

Զեղ արդէն պատմել եմ, բարեկամներս, թէ ինչպէս անդղացիներին վեց ամիս շարունակ՝ 1810 թ. հոկտեմբերից մինչև 1811 թ. մարտ ամիսը, պաշտպուած դրութեան մէջ պահեցինք հէնց իրենց ձեռքով պատրաստած ականների մէջ՝ Տօրրես Վեդրասում։ Հէնց այդ ժամանակներն էր, որ դէպքի բերմամբ նոցա ընկերակցութեամբ աղուէսի որսի ելանք և ես ցոյց տուի և ապացուցեցի, որ իրենց բոլոր որսորդների մէջ չէր ճարուիլ մէկը, որ հաւասարուէր Կօնֆլանի հուսարի հետ։ Երբ սրարշաւ յետ էի գառնում փրանսիական բանակը՝ կենդանու դեռ թարմ արինը սրիս ծայրից կաթելիս, իմ բաջութեանս վկայ պահակ-զինուորները, որոնք գտնուում էին յառաջապահ գնդի պահակ-կէտերում, բարձրայն չնորհաւորեցին ինձ, իսկ անդղացի որսորդները դեռ ևս ոռնուում էին յետնիցս, այնպէս որ ես արժանացայ երկու կողմի գովասանքին ևս Աչքերս արտասուրով լցուեցան այն զիտակցութեամբ, թէ ես էի՛, որ այդչափ քաջերի հեացմունքն էի շարժել։ Այդ անդղացիք, — գիտէք—մեծահոգի հակառակորդներ են։ Նոյն երեկոյեան ստացայ մի կապոց, սպիտակ դրոշակով զարդարուած և հետեալ հասցէով — և Աղուէսն սպանող հուսար սպային։ Կապոցի մէջ, բանից դուրս եկաւ, որ հէնց աղուէսն էր փաթաթուած, որ ես զարկելիսն էի։ Հետան էլ դրուած էր կարճ, բայց սրտաշարժ մի տոմսակ, ճիշդ անդղացու հոգու արտայայտութիւն, որի մէջ ասւում էր, թէ որովհետեւ ես էի սպանել աղուէսն, ուրեմն և ինքըս պիտի վայելէի։ Նոքա, ինչ ասել կուզէ, չգիտէին, որ Փրանսիացիք սովոր չեն աղուէս ուտելու և այդ վարմունքն, ի հարկէ ապացուցանում էր միայն նոցա այն ցանկութիւնը, որ որսը

վայելէ միայն նորան, ով որսի ժամանակ ամենամեծ փառքի էր արժանացել: Եւ որովհետև Քրանսիացին քաղաքավարութեան հարցերում երբէք պարտական մնալ չէ կարող, ուստի և այդ ազնուատոհմ որսորդներին դարձրի իրենց աղուէսը, ինըքեւով հաճել ընդունել ընծաս, իրու մի անուշ պատառ իրենց հետեւ մալ որսորդական նախաճաշի համար: Ահա թէ ինչպէս են կուռմ իսկական ասպետները պատերազմի դաշտում:

Իմ ձիւրշաւի ժամանակ բաւական ճիշդ գաղափար կազմեցի անգղիսական բանակի ամրութիւնների մասին և էջնց նոյն երեկոյեան իմ հայեացքներս պարզեցի Մասսենայի առաջ:

Մեծ յոյս ունէի, որ ասածներս կդրդէին նորան յարձակում գործելու, բայց, գժրադարձար, այդ ժամանակ մեր բոլոր մարաջախաններն իրար գլուխ էին կրծում, իրար վրայ հաշելով և ատամներ ցոյց տարով էին զրադուած, ինչպէս կատարեալ քաղցած շներ, — Նէյն ատում էր Մասսենային, սա ատում էր Փի.նօմին, իսկ Սուն բոլորին. ուստի և ոչինչ էլ չէր ձեռնարկում: Այն ինչ պաշարն սկսուել էր պակսել, իսկ մեր պատուական այրուծին կորչում. անհետանում էր ապուռի պակասութիւնից: Ձմեռուայ վերջերքին մենք արդէն հնարաւառութիւն էինք ունեցել թալանել երկիրն ամբողջապէս, բայց և այնպէս ուտելու ոչ մի բան չէինք կարողացել ձեռք ձգել, չընայելով, որ մեր պաշարի թեթև զնդերն ամբողջ շրջակայքը աջ ու ձախ ոտքի տակ էին տուել: Նոյն իսկ մեղնից ամենահամարձակների համար պարզ էր, որ նահանջելու ժամը հասել է: Աս էլ խօսք չկայ, չէի կարող չխոստովանել այդ:

Բայց նահանջելն էլ շատ հեշտ բան չէր: Ոչ միայն մեր զօրքերը թուլացել ու հիւծուել էին պաշարի պակասութիւնից այլ և թշնամին խիստ ոգեսրուեցաւ, տեսնելով մեր անվերջ անգործութիւնը: Վելլինկառնից, պէտք է ասել, շատ էլ չէինք վախենում: Ճիշդ է, նա քաջ ու շրջահայեաց էր, բայց ձեռներեւ ցութեան հարկաւոր հողին չունէր: իսկ միւս կողմից ուղենար էլ, չէր կարօղ մեզ արագ հետևել՝ այդ մեր ձեռքով անապատ գարձրած երկրի միջով: Դորա փոխարէն մեր երկու թեսերի կողմից և հետեւից շրջապատուած էինք պուրտուգալացի զինուած զիւղացիների և գվերիլիաների՝ կամաւորների ահազին բազմութեամբ: Այդ ամբողջ անկանոն բազմութիւնը ողջ ձմեռը բաւական յարգական հեռաւորութեան վրայ էր պահում իրեն, իսկ այժմ, երբ մեր ձեռները բոլորովին յսգնել ու դադ-

քել էին, նոքա, աներես ճանճերի պէս մեր յառաջապահների «զահէն» էին տանում, և ով որ ընկնէր նոցա ձեռքը, վայն եկեղեցարել էր նորան. արդէն գիտէինք, որ այդպիսին էլ փրկութիւն չունի: Խո կարող եմ իմ անձնական—ծանօթ սպաներից ամբողջ տասնեակ անուններ թուել, որոնք կոտորուել, սպանուել էին նոցա ձեռքով այդ. Կարճ միջցում և ամենից բաղդաւորը նոցանից կարող էր նա համարուել, որն սպանում էր հրացանի բռնուելով, որ դժբաղդ զոհի գլխին կամ սրտամիջին էր ուղղւում, այս կամ այն ժայռի կամ քարի ծերպի յետսից. Ոմանք այնպիսի՝ սարսափելի տանջանքներով էին մահ ընդունում, որ մենք, հնար եղածի չափ, աշխատում էինք, այդ լուրերը նոցա ազգականների ականջը չհասնէին: Այդպիսի ողբերգական դէպքերն այնքան յաճախ էին կրկնւում և այնպիսի զօրեղ տպաւորութիւն էին թողել մեր զինուորների վրայ, որ մեծ դժուարութեամբ էինք կարողանում հարկաւոր դէպքում բանակից դուրս ուղարկել նոցա: Դվերիլիասների մէջ, մանաւանդ, աչքի էր ընկնում մի վատչուէր, անզգամ արարած, նոցա պարագլուխը, որի անունն էր Մանուէլօ «Ժպառուն», որի արարքները սարսուռ էր ձգել մեր զինուորների վրայ: Դա մի վիթխարի, հաստամարմին մարդ էր, ուրախ դէմքով: Իւր խըմքի՝ այդ աւազակների գլուխն անցած մեր ձախ թևի կողմը գըտնուող լեռների մէջ էր ծածկուած-պահուած այդ անպիտանը: Ամբողջ հատորներ կարելի է գրել այդ բաջի անգութ գործերի մասին, բայց չի կարելի և չխստովանել, որ նա աչքի ընկնող մէկն էր, որ իւր հրոսակախումբն այնպէս էր կազմակերպել ու դասաւորել. որ անհնար էր նորա բռնած տեղերից միւս կողմն անցնել Սյոյ բանը շատ վասնգաւոր հանգամանք էր դարձել, բայց ունեցաւ և իւր մի քանի, բոլորովին անսպասելի, հետևանքները, որի մէջ կհամոզուիք իմ պատմածի շարունակութիւնը լսելով: Եթէ նա ճիպոտով ծեծել չտար իւր տեղապահին... բայց, չարժէ առաջ վագեր, իւր ժամանակին այդ կլսէք:

Նահանջի հետ կապուած էր շատ մեծ դժուարութիւններ, բայց բոլորովին պարզ էր, որ ուրիշ հնարք չէր մնացել, ուատի և Մասսենան առանց դանդաղելու սկսեց հիւանդներին ու սայլերի կարաւանը Տօրբես-Նովասից, որտեղ գտնւում էր զինաւոր բանակետղը, ուղարկել Կօհմբըի՝ մեր հաղբրդակցութեան գծի վրայ եղած ամենամօտ ամրոցը: Սակայն այդ բանը նա չկարողացաւ ծածուկ կատարել, ուստի և գվերիլիասները

հետզհետէ սկսեցին ամբողջ վոհմակներով երևալ մեր թերի կողմերում: Մեր զօրաբաժիներից մէկը, որի հրամանատարն էր Կլօպէլ, Մօնրբիօնի հեծելազօրի գումարտակի հետ, այդ ժամանակ գտնւում էր Տագօից շատ հարաւ եւ անհրաժեշտ էր անպատճառ իմաց տալ նոցա եւս մեր նահանջելու դիտաւորութեան մասին, ապա թէ ոչ նոքա բալորովին որեւէ օգնութիւնից զուրկ կմնային՝ թշնամու երկրի հէնց կենտրոնում: Շատ լաւ եմ մտաբերում իմ մտորանքս, թէ ինչպէս պիտի վարուի Մասսենան, որովհետեւ սովորական լրատարներն անկարող էին ճեղքելանցնել թշնամու պահակները, իսկ փոքրիկ խմբերն, անշուշտ, պարտութիւն պիտի կրէին: Ինչ եղանակով էլ լինէր, բայց նոքա պէտք է անշուշտ նահանջի հրաման ստանային, ապա թէ ոչ ֆրանսիան տասնեւչորս հազար մարդ կարող էր կորցնել: Իմ մտքով չէր էլ անցնում, որ ինձ՝ գնդապիտ ժերարիս էր վիճակուած այդ գործն անելու պատիւը, որը միայն հէնց կարող էր փառքով պսակել ում կամենաք եւ որ պէտք է ամինառաջին տեղը բռնէր այն բոլոր քաջադորձութիւններիս մէջ, որոնց չնորիկ ամենայայտնի մարդ էի դարձել:

Այդ ժամանակ ես ծառայում էի Մասսենայի ոպայակոյտի մէջ, որտեղ բացի ինձնից գտնւում էին նոյնպէս երկու խիստ քոջ, խելօք ու ընդունակ աջակից-սպայ (աճյուտանու): Նոցանից մէկի անունն էր Կօրտեքս, իսկ միւսինը՝ Դիւլեսասի: Նոքա երկուսն էլ ինձնից մեծ էին տարիքով, բայց կրտսեր միւս յարաբերութիւնների նկատմամբ: Կօրտեքսը մի փոքրիկ, թխաղէմ մարդ էր, շատ աշխոյժ ու կրակուու: Նա մի պատուական զինուրական էր, որ կորաւ միայն իւր ինքնավստահութեան երեսից:

Նթէ նորան ականջ կախելու լինէինք, ամբողջ բանակում առաջին մարդն ինքն էր: Դիւլեսասին, ինչպէս եւ ես, գասկօնացի էր եւ շատ էլ սիրուն տղամարդ, առհասարակ ինչպէս բոլոր գասկօնացիքս: Ամենքս օրատակութիւն էինք անում հերթով եւ հէնց այն առաւօտը, որի մասին պատմում եմ, հերթապահը Կօրտեքսն էր: Աս տեսայ նորան միայն նախաճաշի ժամանակ, որից յետոյ նա ոտով-դլլով տնեետացաւ իւր ձիու հետո: Եյդ ամբողջ օրը, Մասսենան, ինչպէս եւ առհասարակ, շատ մոայը էր եւ համարեա ամբողջ օրը հեռադիտակով գիտում էր անգղիական բանակի ամրութիւնները և այն նաևը, որ երեւում էին Տագոյի վրայ: Ոչ մի խօսք չտաց նա թէ ինչ յանձնարա-

բութեամբ էր ուղարկել մեր ընկերոջը։ Խոկ մենք էլ չէինք համարձակում բան հարցնել։ Հենց նոյն գիշերը, ժամը տասներեկուի մօտերը նա դուրս եկաւ և մօտ կէս ժամը բոլորովին անշարժ, արձանացած, ձեռները կրծքին խաչած կանգնեց, խոր հայեացքով դիտելով զիշերուայ խաւարը՝ դէպի արևելք։ Նա մինչ այն աստիճան անշարժ էր, որ նորա վերարկուի մէջ փաթաթուած և սըրածայր գլխարկով ամրող մարմինը կարելի էր արձանի տեղ ընդունել։ Որչափ էլ բոլոր մտաւոր ոյժերս հաւաքեցի և խելքիս զոռ տուի, բայց ոչինչ, ոչինչ հասկանալ շկարողացայ, թէ ինչ էր դիտում մարձախտն այդպէս յառած հայեացքով. վերջապէս սրտնեղած՝ հայհոյանք արձակելով բերնից և կրուկների վըրայ շուռ գալով տուն զնաց և դուռն ամուր շիխացրեց յետեից։

Հետեւեալ օրը, առ առատեան, Մասսենայի և իւր օգնական սպայի մէջ մի խօսակցութիւն տեղի ունեցաւ, որից յետոյ Դիւպիւնին և անհետ կորաւ իւր ձիու հետ։ Այդ գիշեր, երբ ես նստած էի նախասենեակում, մարձախտը նորից անցաւ իմ մօտով և ես նկատեցի լուսամուտից, թէ ինչպէս երէկ գիշերուայ պէս կանգնած դէպի հեռու արևելք է նայում։ Ամրող կէս ժամ կանգնած էր այդպէս անշարժ, կարծես խաւարի մէջ մեխուած ստուէր լինէր։ Յետոյ կրկին շտուն դարձաւ, դուռը շիխացրեց և լսեցի նորա կօշիկների խթանների ձայնը և թրի չխչխկոցը սրահով անցնելու ժամանակ։ Նոյն իսկ իւր հոգեկան ամենալաւ րոպէներին բաւական դաժան ծերուկի մէկն էր Մասսենան, իսկ երբ բարկանում էր, Աստուած հեռու տանէր։ այդպիսի ըռպէներին աւելի կգերադասէի երես առ երես նոյն իսկ իրեն՝ կայսրի առաջ կանգնած լինել, քան նորա Գիշերը լսում էի, ինչպէս քթի տակին փնփնթում ու հայհոյում էր և ոտները գետին էր զարկում գլխավերես, բայց ինձ չէր կանչում, իսկ ես շատ լաւ գիտէի նորա ընաւորութիւնը և առանց կանչելու չէի համարձակում վերև գնալ։

Հետեւեալ առաւտաեան իմ հերթս էր, որովհետև երեքից միայն ես էի մնացել տանը։ Մասսենայի սիրելին էի համարւում։ Նա, առհասարակ, մի առանձին համակրանք էր տածում դէպի քաջարի զինուարականները։ Հաւատացնում եմ և պնդում, որ այդ առաւտը, երբ ինձ իւր մօտ կանչեց, նորա թուխ աչքերում արցունքի կաթիւներ էին շողում։

— Ծերար, ասաց նա, — մօտ եկէք։

Բարեկամաբարար թէիցս բոնելով՝ արևելք նայող լուսա-  
մուտի մօտ տարաւ:

Մեր առաջ տարածուած-փռուած էր հետևակ զօրքի բա-  
նակը, իսկ նոցանից յետոյ՝ հեռւում, հեծելազօրը իւր կապած  
ձիերի երկար շարքերով: Շատ պարզ նշարել կարելի էր ֆրան-  
սիական առաջապահ զօրքի սպահակները, իսկ յետոյ ձգւում  
էր մի բաւական ընդարձակ, բաց դաշտավայր, տեղատեղ կանա-  
չին տուող խաղողի այգիներով: Նոցանից յետոյ, աւելի հեռւում  
շարան-շտրան ընկած էին բուրների շարքեր, որոնց մէջ ամե-  
նից աւելի աչքի էր ընկնում մէկը իւր որածայր, բիզ դադա-  
թովի: Այդ բրակների ստորոտները գտներուած էին անտառի  
շերտերով: Միակ լայն ճանապարհը շատ նկատելի կերպով աչ-  
քի էր զարնում շրջապատող կանաչների մէջ, իբրև մի ոպիտակ  
լայն երիզ, որը երբեմն իջնում, երբեմն բարձրանում և կոր-  
չում էր, նորից կրնում և վերջապէս բոլորովին անհետանում  
հեռու բուրներից մէկի կրճում:

—Այ, տեսնո՞ւմ ես, —ասաց Մասսենան, ցոյց տալով սա-  
ըը, դա՝ Սիերրա-դը-Մերօդալն է, նորա գագաթին բան տես-  
նո՞ւմ էք:

Պատասխանեցի որ՝ ոչինչ:

—Իսկ այժմ, հարցընց նա ինձ տալով իւր հեռաղիտակը:

Դիտակի օգնութեամբ լեռան սէռի վրայ մի փոքրիկ բար-  
ձրութիւն տեսայ, որ քարակոյտի կամ գերեզմանաքարի էր  
նմանում:

—Այն ինչ որ տեսնում էք, —շարունակեց մարաջախտը,  
—ուրիշ բան չէ, եթէ ոչ գերանների կոյտ, որ ցցուած են փա-  
ռոսի նման: Մենք այդ գերանները ցցել ենք այն ժամանակ,  
երբ այս բոլոր շրջակայքը դեռ ևս մեր ձեռքին էր. իսկ այժմ,  
թէ և նա այլ ևս մեր ձեռքին չէ, բայց և այնպէս նշանը դեռ ևս  
այնտեղ է: Ժերար, այդ գերաններն այս գիշեր պիտի վառուին  
անպատճառ: Այդ բանին պէտք ունի ֆրանսիան, կայսրը և  
զօրքը: Ձեր ընկերակիցներից երկու սն տրդէն ուղևորուել են  
նոյն յանձնարարութեամբ, բայց նոցանից և ոչ մէկին չի յաջո-  
ղել մինչև գագաթը բանձրանալ: Այսօր ձեր հերթն է, և ես ա-  
ռօթում եմ Աստուծուն, որ դուք աւելի բաղդատոր լինիք և ա-  
ռաւել յաջողակ:

Զինուորը չպէտք է հարցնէ իրեն տուած հրամանի նպա-  
տակի մասին, ուստի շտապեցի ելնել սենեակից, բայց մարտ-

ջախտը ձեռքը ուսիս դնելով մի փոքր պահեց ինձ:

— Այս բոպէիս ամեն ինչ կիմանաք և կհասկանաք, թէ որչափ կարևոր է այն գործը, որի համար դուք կեանքներդ վտանգի էք ենթարկում, — ասաց նա:

— Մեզնից յիսուն մղոն հեռու, Տագոյ գետի միւս ափին, գտնուում է Կլօզելի բանակը: Նորա բանակը զետեղուած է Սիերրա գ'օսսա լեռնագագաթի; Հէնց ստորոտում, Այդ սրածայր գագաթի ծայրին գտնուում է մի փարոս, իսկ նորա մօտ մի զինուոր: Մեր մէջ պայմանաւորուած ենք, թէ հէնց որ կէս գիշերին կնկատի մեր նշանի կրակը, նա իսկոյն պիտի վառէ իւր նշանի խարոյկը և անմիջապէս նահանջէ դէպի գլխաւոր բանակը: Եւ եթէ նա այդ քանն իսկոյն չանէ, ապա ես կնահանջեմ առանց նորան սպասելու, Երկու օր, իրար ետենից, ես աշխատեցի պայմանաւորուած նշանով իմաց տալ նորան: Այսօր պէտք է կամ համնեմ նպատակիս և կամ նորա բոլոր բանակը մեր յետեր կմնայ և կջարդուի:

Ա՛խ, բարեկամներս, չգիտէք թէ ինչպիսի հպարտութեամբ լցուեցաւ սիրտս, երբ, լսեցի, թէ ինչ մեծ գործ էր նախապատրաստել ինձ համար բաղդը: Եթէ կենդանի մնամ, այն ժամանակ իմ մրտենի պամակի վրայ կաւերանայ և մի նոր, փարթամ տերև ևս: Իսկ եթէ, ընդհակառակը, մոռնեմ, ապա դա շատ արժանաւոր մահ կինին: Ես ոչինչ չասացի, բայց չեմ կասկածում, որ այդ աղնիւ խոնկերս, բոլորն էլ արտափայլեցին դէմքիս վրայ, որովհետև Մասսենան յանկարծ, համարեա խլելով, բռնից ձեռքս և սկսեց ամուր, շատ ամուր թոթուելի:

— Ահա բրուը և նորա վրայի փարոսն, — ասաց նա: Ձեր և նորա մէջ եղած տարածութեան վրայ գտնուում է այն գվերիվասը իւր խմբօվ: Այդ յանձնարարութիւնը ես մեծ խմբակի յանձնել չեմ կարող, իսկ փոքրիկ խմբակն էլ իսկոյն կնկատուի նոցա կողմից և կջարդուի: Ուստի և մենակ ձեզ եմ յանձնում այդ գործը: Գլուխ բերէք, ինչպէս կամենաք, միայն այնպէս արէք, որ կէս գիշերին այն բըլ գիմին կրակ տեսնեմ:

— Եթէ ձեր ասածը չկատարուի, ապա կիսնդրեմ ձեղնից, մարաջախտ Մասսենա, հոգալ, որ իմ ունեցած իրեղէններս ծախուի և փողերը մօրս ուղարկուի: :

Ես ձեռքս գլխարկիս տարոյ և կրունկներիս վրայ շուռ եկայ, հպարտութեամբ ճխացող սրտով, արբեցած այն մըտ-

քով, թէ ինչ հերոսական գործ է սպասում ինձ:

Առանձնացայ սենեակս և մի քանի ժամանակ սկսեցի մը-  
տածել, թէ ինչպէս անեմ, որ յանձնարած գործս աւելի վար-  
պետութեամբ սկսեմ: Այն փաստը, որ ոչ Կորտեքսին, ոչ Դիւսպ-  
լէսին չյաջողեց բարձրանալ Սիերրա դը-Մերօդալի գագաթը,  
չնայելով որ երկուսն էլ վերին աստիճանի ճարպիկ, ե-  
ռանդուն և հմուտ սպաներ էին, տպացուցանում էր, որ  
ամբողջ դաշտավայրն իւր շրջակայքով աշարուց կերպով  
հսկում էր գվերիկեասների՝ կամաւրների կողմից: Քար-  
տէզի վրայ տարածութիւնը չափեցի և հաշուեցի. մենք  
հեռու էինք բլուբներից տասը մղն, դաշտավայրի միջով: Յե-  
տոյ սկսում էր բլակի ստորոտի անտառի շրջանը, որ տա-  
րածւմ էր մօտ երեք կամ չորս մղոն: Այնուհետև գալիս էր  
էր խսկական գագաթը, որը թէն շատ բարձր չէր, սակայն ոչ  
մի հնար չկար թագնուելու նրա վրայ: Սոքա էին այն երեք  
շրջան ճանապարհորդութիւնը, որ դրուած էր առաջս և ես  
պիտի կատարէի: Ինձ այսպէս էր թւում, որ եթէ որևէ է հնար-  
քով հասնեմ մինչև անտառը, ապա մնացտծն այնուհետև  
շատ հեշտ կլինէր, որովհետև կարող էի թագնուել ծառերի  
թաւուաներում. գիշերային մթութեան ծածկոյթի տակ գա-  
գաթն ելնել դժուար բան չէր: Խսկ յետոյ ժամը ու-  
թից մինչև տասներկուսը իմ տրամադրութեանս տակ  
մնում էր չորս ժամ մութ միջոց—որ շատ ու շատ բաւական  
էր բլուբն ելնելու համար: Եւ այսպէս ամենամեծ դժուարու-  
թիւնը ներկայացնում էր առաջին մասը: Հարթ, տափարակ  
դաշտավայրի միջով ձգում-անցնում էր շատ բան խոստացող  
ճանապարհ և ես մտարերեցի, որ իմ երկու ընկերներս էլ  
գնացել էին ձիով: Հենց այդ հանգամանքն էլ, անշուշտ, նոցա  
կորստեան պատճառն էր եղել, որովհետև աւազակների համար  
ճանապարհը շարունակ դիտելուց և իւրաքանչիւր անցորդի հա-  
մար թակարդ լարելուց էլ հեշտ բան չկար: Ինձ համար, գի-  
տէք, որ մեծ դժուարութիւն չէր սրացչաւ անցնել այդ տարա-  
ծութիւնը, որովհետև մօտ էին գտնուում ոչ միայն իմ Վիօլէտո-  
տաս և Ռատապլանս, մեր բանակի երկու ամենաընտիր և ա-  
ռաջնակարգ նժոյգներս, այլ և պատուական անգլիական  
որսի ձիա, որ խլել էին սէր Կոտոսնից: Բայց և այսպէս, երկար  
չափ ու կշիռ անելուց յետոյ վճռեցի ուղով ճանապարհ ընկ-  
նել, որովհետև այդ ինձ հնարաւորութիւն կտար ամեն մի

անակնկալ պատահականութիւնից աւելի լաւ օդուռելու ինչ վերաբերում է հագուստիս, ապա կասեմ ձեզ բարեկամներս, որ հուսարական համազգեստիս վրայից ձգեցի մի երկար վերաբերու, գլուխս էլ անցըի մի գորշադյուն գլխարկ, Գուցէ, կարցնէք, ինչո՞ւ գիւղացու պէս չծըպտուեցայ: Կպատասխանեմ, որ ոչ մի ապնիւ մարդ չի կամենայ լրտեսի մահ ընդունել: Սպանուել՝ ողջ մէկ էր, իսկ մահ ընդունել պատերազմական դատարանի օրէնքներով՝ բոլորովին այլ բան է: Ես կեանքիս վերջն այդպիսի մահուան վտանգի չէի կամենում ենթարկել:

Կէս օրից բաւական անցել էր, որ գաղտնի ելայ մեր բանակից և անցայ մեր պահապանների շարքի միջով: Վերաբերեմ տակ ունէի հեռադիտակս, գրպանի տարբանակս և սուրս. իսկ գրպանումս կար՝ արեթ, կայժահան և կայժաքար:

Երկու-երեք մղոն տարածութիւնը արագ անցայ՝ ծածկութով և պահուտուելով խաղողի թփերի յետեւը. այդ յաջողութիւնն ինձ աշխոյժ էր ներշնչում և ինքս ինձ մտածում էի, թէ մի քիչ խելքը գիխին և շրջահայեաց մարդն անպատճառ գործը գումիս կը տանէր: Ինչ ասել կուզէ, որ մի մեծ բան չէր Կօրտեքսին կամ Դիւպիկսին նկատելը, որոնք բաց ճանապարհով սրբնթաց արշաւում էին. բայց ուրիշ բան է սատանայ Ժերարը, որը առաջ է գնում թփերի ասկով: Կարող եմ համարձակ պնդել, որ հինգ մղոն անցայ՝ առանց որևէ է արգելքի հանդիպելու: Այդտեղ պատահեց մի փոքրիկ տնակ, շրջապատուած խաղողի այգիներով, որի մօտ նկատեցի մի քանի սայլ ու մի քանի էլ մարդ, — դոքա առաջին պատահած մարդիկն էին: Եսկ որովհետեւ ես արդէն մեր բանակի ամրութիւնների գծից գուրս էի գտննում, ուստի և շատ լաւ գիտէի, որ այդ կողմերում պատահած ամեն մի մարդ իմ թշնամիներին էր պատկանում. ուստի և աւելի կռացայ, կուշ եկայ ու գետին կպայ և այդպէս կուզէ-կուզ սկսեցի առաջ գնալ դէպի այն կէտը, որտեղից կարող էի աւելի լաւ գիտել, թէ ինչ էր կատարւում առաջս: Տեսայ, որ դատարկ գինու աակառները սայլերի վրայ դարսող գիւղացիներ են: Ինքս ինձ վճռեցի, որ նոքա ինձ ոչ օգնել կարող են և ոչ էլ խանգարել, ուստի և ճանապարհս շարունակեցի: Բայց շուտով համոզուեցայ, որ առաջս դրած խնդիրն այնքան էլ հեշտութեամբ լուծելու խնդիրներից չէր, ինչպէս որ թւում էր առաջին հայեացքից: Որքան դաշտավայրը դէպի վեր

էր բարձրանում, այնքան էլ թփերն աւելի ու աւելի նոսրանում էին և ես վերջապէս հասայ մի բուրովին բաց տեղի, որ շրջապատուած էր ցածրիկ բրուրներով: Թագնուերով առուր մէջ, սկսեցի դիտակովս դիտել շուրջս և իսկոյն նկատեցի, որ ամենն մի բըրակի վրայ մի-մի պահնորդ էր կանգնած և որ այդ մարդիկն էլ, մեղ պէս, պահնորդների և զինուորների մի ամբողջ շարք էին կանգնեցրել այդ կողմերը: Ես լսել էի այն կարգապահութեան մասին, որ տիրում էր այն տնդգամ «Ժպատուն»ի խմբի մէջ և այժմ հէնց աչքիս առաջ աերնում էի շոշափելի օրինակը: Բլրակների մէջ ձգուած էր պահնորդների մի երկար—անվերջ շղթայ, և թէս բաւական մեծ պտոյտ էի արել, որ նոցա կողքանց, քովընտի պատահեմ, բայց և այնպէս ճիշդ դէմ առ դէմ եւայ թշնամիներիս դէմ: Մնացի մոլորուած, չգիտէի ինչ անեմ: Տեղն այնքան բաց-բացահար էր, որ եթէ մուկ էլ վազէր՝ կնկատուէր, եթէ զիշեր լինէր, աննկատելի կերպով կանցնէի, ինչպէս որ Անդիխացիք արին Տօրրէս-Վեդրասի մօտ, բայց մինչև սարը հասնելը դեռ շատ ճանապարհ կար և եթէ սպասէի մինչև սութը կոխելը, ապա ես երբէք չէի կարող ժամանակին հասնել, որպէս զի փարոսը հրդեհէի ճիշդ կէս զիշերին: Նւ այսպէս, առուիս մէջ պառկած հաղար ու մի ծրագիր էի կազմում, մէկն միւսիցն աւելի ու աւելի վտանգաւոր, աւելի անիրադորենէի: Նւ յանկարծ մի լուսաւոր միտք անցաւ գըլխովս, այն մագերից մէկը, որ օգնութեան է համում չվկատող քաջին: Ցիշնում էր, ասացի, որ տնակ-պահնդոկի մօտ կանգնած էր երկու սայլ՝ բեռնաւորուած դատարկ տակառներով: Եղների գրւելը գարձրած էր արենելը, ուստի և պարզ էր, որ սայլերն այն կողմը պիտի երթան, որը հէնց ինձ էր պէտք: Եթէ միայն հնար գտնէի նոցա մէջ թագնուերու, ապա դա ամենայ յաջող եւ հեշտ միջոցը կլինէր պահնորդների շղթայի միջոց տեցնելու համար: Սյդ ծրագիրն այնքան պարզ և միեւնոյն ժամանակ էլ այնքան լաւ էր, որ այդ բանը մտածելուց յետոյ վկարողացայ ուրախութեանս արտայայտութեան բացականչութիւնս զատել և իսկոյն շտապեցի դէպի անակ-պահնդոկը: Այդտեղ թփերի յետեւը թագնուած՝ սկսեցի դիտել ճանապարհի վրայ կատարուող ամեն մի բան:

Գլխներին կարմիր զիկարկ քաշած երեք զիւղացիներն արդէն սայլերից մէկը բեռնել և միւսի էլ մի երրորդ մասնագէն լցըրել էին, Տան մօտ դեռ բաւականաշափ դատարկ

տակառներ էին թափթփուած, որոնք հանգիստ պառկած իրենց հերթին էին սպասում, թէ երբ պիտի սայլերի վրայ պառկեն, Բաղդը հովանաւորում էր ինձ (ես միշտ էլ ասել եմ, որ բաղդը կին է, « ստի և չի կարող դիմադրել զգլիսիչ, երետասարդ հուսարի առաջ): Այն ժամանակ, երբ ես դիտում էի, երեքն էլ ստան պանդոկը և որովհետեւ օրն էլ շատ տաք էր, յոզնել էին և ինչպէս երևում էր ծարաւը նեղում էր նոցա: Հենց այդ ըոպէին կայծակի արագութեամբ դուրս թռայ իմ թագստի տեղից, ցատկեցի սայլի մէջ և դատարկ տակառներից մէկի մէջ սլուեցի: Տակառը տակ ունէր, բայց բերեակալ չունէր և պառկեցրած էր կողքի վերայ, բացուածքը դէպի սայլի ներսը. Ես կունդ ու կծիկ գարձայ, կուչ եկայ շան պէս, որը կուչ է դալիս իւր նեղ բնի մէջ, ծնկներս ծալեցի և համարեա կոյցրի կզակիս, որովհետեւ տակառը շատ մեծերից չէր, իսկ ես բաւական խոշոր մարդ էի: Մինչդեռ ես այդպէս պառկած էի, երեք գիւղացիները նորից դուրս ելան և իսկոյն զլխավերես մի թրիկոց լսեցի, որից և եղրակացրի, որ վրաս մի ուրիշ տակառ էլ դրին: Նոքա այդ տակառներից այնքան լցրին սայլի մէջ, որ մոլորուել-մնացել էի, թէ ինչպէս պիտի դուրս պրծնեմ այդտեղից: Սակայն ո՞վ է մինչև գետը հասնելը բորկանում: Հաս. տատ համոզուած էի, որ եթէ բաղդը և իմ սեփական խելքս օգնեցին մինչև այդաեղ հասնելու, ապա անշուշտ այդ օգնութիւնը յետոյ էլ չեն զլանայ:

Երբ սայլակը պուկէ-պուուկ լցուեցաւ, նոքա ճանապարհ ընկան, իսկ ես սուս ու փուս քթիս տակը ծիծաղում էի իմ տակառի միջից, որովհետեւ ամեն մի նոր քայլն ինձ. իմ նպատակ-կէտին էր մօտեցնում: Առաջ էին զնում շատ դանդաղ, իսկ գիւղացիները քայլում էին սայլերի մօտով: Այդ բանը ես եղրակացրի նորանից, որ իմ շուրջն՝ շատ մօտ խօսակցութեան ձայներ էին լւում: Գիւղացիները շատ ուրախ մարդիկ էին երևում, որովհետեւ ամրող ժամանակը ծիծաղում էին՝ հոգու խորքից և շարունակ առաջ գնում: Ի՞նչ էր նոցա ծիծաղի ու հանագների պատճառը՝ չիմացայ. թէկ բաւական ազատ խօսում եմ նոցա լեզուով, բայց ծիծաղելու ոչ մի բան չէի գըտնում ականջիս հասնող հատուկտոր խօսքերից:

Ես ենթավրում էի, թէ այն արագութեամբ, որով եղներն էին առաջ գնում, մենք ժամը մօտ երկու մղոն էինք կտրում: Ուստի, երբ համոզուեցի որ արդէն երկու ժամ ու կէս անցել էր լուսնաթ

(անտանելի ժամեր էին դոքա, բարեկամներս, որ անցրի ըոլուրովին գումար ու կծիկ դարձած, խեղդուելիս և համարեա թէ թունաւորուած գինու գոլորշներից), ապա այլ ևս չի կասկածում, որ ամենալատանդաւոր տեղը մենք յետևներս էինք թողել և որ այժմ անտառի ու լեռան սահմանագծի վրայ ենք գտնուում: Այժմ մնում էր, որ խելքիս զոռ տայի, թէ ինչպէս դուրս պլծնեմ տակառների արակելից: Հազար ու մի միջոցներ էին անցնում մտքովս և ես մնացել էի շուարած. թէ դոցանից որն աւելի յարմարագոյն է, երբ խնդիրը ինքն իրեն լուծուեցաւ ամենապարզ եղանակով և ինձ համար բոլորովին անսպասելի հետևանքով:

Յանկարծական մի ցնցում զզացի. սայլը իսկոյն կանգնեց և մի քանի կոշտ ու բիրդ ձայներ, յուզուած շեշտերով սկսեցին միանգամից խօսել:

— Որտեղ է, որտեղ,—քացականչեց մէկը:  
— Մեր սայի մէջ, պատասխանեց միւսը:  
— Ո՞վ է, ինչ մարդ է, հարցրեց երրորդը:  
— Թրանսիացի սպայ. ես տեսայ նորա գլխարկն ու կօշիկները:

Ամենքն էլ բարձրաձայն ծիծաղում էին:  
— Պանդոկի լուսամուտից նայում էի և տեսայ, ինչպէս ցատկեց—սլուեց տակառի մէջ. կարծես ցլամարտ լինէր, որին Սեվիլիայի կրկէսի ցուլն էր հալածում:

— Ուրեմն, ո՞ր տակառն է:  
— Ահա այս, պատասխանեց մարդն ու բոռունցքով զարկեց հենց գլխիս մօտ եղած տակառին:

Այս ձեզ զրութիւն, բարեկամներս, այն էլ իմ անուան ու վարկի տէր մարդու համար: ՚Իեռ այսօր էլ, քառասուն տարի անցնելուց յետոյ, կարմրում եմ այդ դէմքը յիշելու ժամանակի: Հաւի պէս կապուած, կապկապուած լինել և անխօս լսել այդ արջերի քամահանքը, դորա հետ գիտակցել, թէ ինչպիսի անարժան և ծիծաղելի վախճան ունեցաւ իմ առաքելութիւնն... ես անկեղծ շնորհապարտ կլինէի այն մարդուն, որի մտքովն այդ ըսպէին կանցնէր գնդակն ուղղել ճակատիս և այդպիսով կազատէր ինձ իմ յուսահատ վիճակիցս:

Լսում էի տակառների թխկոցը, որ սալլակից վայր էին ձգում և յանկարծ առաջս ցցուած տեսայ երկու, ահազին միբուքով մարդ, հետն էլ երկու հրացանի փող՝ ինձ ուղղուած:

Նոքա կոպտութեամբ բռնեցին ինձ իմ համազգեստի թե-  
ւերից և լոյս աշխարհ հանեցին։ Մրկի մի շատ ողորմելի պատ-  
կեր էի ներկայացնում ես այդ բռպէին, երբ կանգնած՝ աչքերս  
կկոցում էի արևի աչք կուրացնելու չափ փայլուն լոյսից և  
հազիւ հաղ կարողանում էի շունչ քաշել։ Բոլորովին կծկուել  
մնացել էի և չէի կարողանում բնդարմացած անդամներս ուղ-  
ղել, իսկ իմ համազգեստս անգղիական զինուորի համազգեստի  
պէս կէս-կարմիր գոյն էր ստացել, գինու դիրդից, որի վրայ  
ես առօք-փառօք պառկել էի Այդ շները չէին դադարում ծի-  
ծաղելուց և իմ բոլոր ջանքերս, որով ձեռքի շարժումներով և  
կեցուածքովս փորձում էի կատարեալ արհամարհանք արտա-  
յայտել գէպի նոցա, ծիծաղի աւելի անզուսպ քրքիջ էին խլում  
նոցանից։ Բայց և այնպէս ինքս ինձ պահում էի սովորական  
արժանապատութեան զգացմամբ և արդէն կարողացայ նկա-  
տել, որ այդ ծիծաղող դէմքերից ամենքը չէին, որ յօժարու-  
թեամբ և ամորժանօք կկամենային հանդիպել հայեացքիս։

Ինձ համար արդէն բաւական էր լոկ մի հայեացք, որ  
ըմբռնէի իրերի իսկական դրութիւնը։ Դիւղացիները մատնել  
էին ինձ գվերիեասների առաջապահ պահորդներից մէկին։  
Շուրջս հաւաքուել էին այդ շներից ութ հոգի, վայրենի արտա-  
քինով, լոյնեզր գլխարկի տակ փոռուած երկար մազերը չթէ  
թաշկինակուլ կապած և բազմաթիւ կոճակներով զարդարուած  
բաճկոններով և գոյնզգոյն գոտիներով։ Խրաքանչիւրն ունէր  
մի-մի հրացան և՝ մի թէ երկու ատրճանակ՝ գոտիներն անցրած։  
Նոցա առաջնորդը, մի անազին մօրուքով սրիկայ, իւր հրացա-  
նի փողը դէմ արեց ականջիս, իսկ այդ ժամանակ մնացածնե-  
րը խուզարկում էին ինձ՝ տակն ու վրայ անելով գրպաններս։  
Ի վերջոյ խեցին թիկնոցս, առան ատրճանակս, հեռաղիտա-  
կը, սուրս և որ ամենից կարեւորն էր՝ արեթը, կայծաքարն ու  
կայծահանը։ Այժմ ես ինձ բոլորսիլին կորած մարդ էի համա-  
րում, որովհետև ինչ էլ որ չպատահէր, բայց ես այժմ այնպիսի  
անկորելի պայմանների մէջ էի, որ չէի կարող կրակ տալ փա-  
րուը, եթէ նոյն իսկ յաջողէի հասնել նորան։

Նոքա ութ հոգի էին, բարեկամներս, աւելացրէք դորա  
պը և երեք գիւղացի և ալդ ամենը միայն իմ դէմ, այն էլ  
բոլորովին զինաթափ եղած։ Արդեօք կտիէն Ժերարն այդ բանից  
յուսահատուեց։ Ինքն իրեն կորցեց։ Օ՛, դուք ինձ շատ լաւ  
էք ճանաչում, բայց այդ շուն-աւազակները դեռ ևս չէին ճա-

նաշում ինձ: Երբէք կետնքիս մէջ դեռ ևս այդպիսի զարմանալիք ճարպիկութիւն և կամքի վերջին ոյժ չէի գործ դրել, ինչպէս այդ ըսպէին, երբ ամեն ինչ կորած էի համարում: Բայց դեռ երկար գլուխ կկատրէք, մինչև որ կկատրղանաք կռահել, թէ ինչպէ՞ յաջողեցրի նոցա ձեռքից պրծնել: Լսեցէք, ևս կպատմեմ:

Սայլից դուրս քաշելուց յետոյ, նոքա խուզարկեցին ինձ, իսկ ես մնացել էի սառած կանգնած, երկար ժամանակ կուչ եկած պառկելուց բոլորսին փայտացած անդամներով: Բայց շուտով այդ ընդարմութիւնը սկսեց անցնել կամաց-կամաց և միտքս սկսեց եռանդով գործել՝ փախուստի նորանոր հնարներ գտնելով: Աւազակների յառաջապահ խումբը գտնւում էր լոռնային մի նեղ կրծում: Նորա մի կողմով ձգւում էր զառիվեր թեք սար, իսկ միւս կողմից՝ մի զառիվայր թեք մակերևոյթ, որ հասնում էր մինչև յառաջապահ խմբից մի քանի հարիւր ոտքնեռու գտնուող մացառներով ծածկուած ձորակը: Այդ քաջերը, ինչպէս ինքներդ կարող էք հասկանալ, կոշտ, լեռնցիներ էին և ինձնից աւելի արագ ու ճարպիկ կարող էին մագլցել լեռների վրայով: Նոքա հագել էին պինդ տրիստաններով ոտքերին կապած տրեխներ, որ լոռնային աշխարհում ամենահիանալի յենակէտ, կռուան էր: Իմ տեղս եթէ մի ուրիշ, աւելի թոյլ ու պակաս եռանդի տէր մարդ լինէր, այդ բոլորը տեսնելուց յետոյ, անշուշտ, յուսահատութեան զիրկը կընկնէր, բայց ես միակնթարթում կշռեցի այդ բոլոր հանգամանքները և օգտուեցայ այն օտարութի դիպուածով, որ բաղրդ դրել էր իմ ճանապարհի վրայ: Զարիթեք կողի հէնց ծայրին ընկած էր դատարկ տակառներից մէկը ևս ամենայն զգուշութեամբ, կամաց-կամաց, մօտեցայ նորան, մի ոստիւնով, որ պատիւ կը բերէր ամենաճարպիկ վագրին անգամ, թռայ տակառի մէջ՝ ոտքերս զէպի առաջ և, թափահարելով նորան ամբողջ մարմնովս, զլորեցի բլրակի եղրից ներքեւ:

Արդեօք կմոռանամ երբնիցէ այդ զարհուրելի ճանապարհորդութիւնը, երբ ես գոռուում գոչումով, ահազին աղմուկով: սարսափելի զառիվայրից ներքել էի գլուրուում: Ծնկներս ու արմունկներս դէմ էի տուել տակառի պատերին, որպէս զի ինքնինձնից աւելի միապաղաղ զանգուած կազմէի: բայց գլուխս, այնուամենայնիւ, մնացել էր դուրս պլրծած տակառի բերնի: բացուածքից և ես շատ մեծ հրաշք եմ համարում, որ ջարդու փշուր չարի գլուխս: Սկիզբը գլորուում էի հարթ, հաւասար թեք.

մակերևոյթի վրայով, յետոյ սկսեցին պատահել խիստ դուրս ցցուած կողեր, որոնց վրայով տակառն այլ ևս ոչ թէ զլորւում էր, այլ ցատկուում վայրի այծի պէս և առաջ նետուում աղմուկ ու ցնցումներով, որից մարմնիս ամեն մի ոսկրոտին ցատում ու տանջուում էր. Քամին սուրուում էր ականջներիս մէջ, իսկ գլուխս՝ պտտում ու պտտում էր, մինչև որ ես բոլորովին ինձ վատ զգացի և համարեա ուշագնաց եղայ. Յետոյ մէկ էլ զգացի մի սարսափելի թրիկոց և ոստերի շխշխկոց. ես հասել էի այն մացառուաներին, որ ես վերեից նկատել էի ներքեւ, շատ ներքեւ խոր ձորակի մէջ: Դոցա միջից էլ ներքեւ զլորուելով, մի նոր թեք մակերևոյթի վրայով, տակառն ընկաւ նոր թփուտների մէջ, զարկուեցաւ մի ծառի և կտոր.կտոր դարձաւ: Ես դուրս եկայ շուրջս թափուած մի ամբողջ կոյտ տախտակի տաշեղ. ների ու շրջանակների միջից, բոլորովին ջարդ ու փշուր մարմնով, բայց ուրախ և առոյդ սրտով, որով զգուժ էի թէ ինչպիսի նշանաւոր գործ եմ արել և ես նորից արդէն երեակայում էի ինձ բլրակի վրայ կրակ տուած փարոսն աշքիս առաջ:

Նոր փորձած սարսափելի վեր ու վար ցատկտելուց անտանելի սիրտ.խառնոց էի զգում և նոյն վիճակն էի զգում, ինչ որ առաջին անգամ ովկիանոսում կատարած ծովային ճանապարհորդութեան ժամանակ, որից այնպէս գեղեցիկ օգտուել գիտեն նենք անգղիացիք: Ստիպուած էի մի քանի ըռպէ հանգիստ նստել, գլուխս յեց ձեռքերիս, իմ խեղճ տակառի մնացորդների մօտ. Բայց երկար ժամանակ հանգստանայու հնարաւորութիւն չկար: Արդէն ականջիս էր հասնում վերեից լըսուով աղմուկն ու աղաղակը, որից եվրակացրի, որ հետապնդողներս լեռնից վար են իջնուած. Արագ ինձս ինձ ձգեցի թփուտի ամենախիստ բաժինը և վաղեցի մինչ այն ժամանակ, երբ բոլորովին ուժապառ եղայ: Այդ ժամանակ գետին փռուեցի, հաղիւ-հազ կարողանալով շունչ քաշել, մինչ այն աստիճան հետում էի և ականջներս սրած՝ սկսեցի ականջ դնել: Ոչ մի ձայն, ժպտուն չէր հասնում ինձ. ակներկ էր, որ կարողացել էի ապատուել ինձ հալածողների ճանկից:

Թարգմ. Տ. Ա.

(Վերջը միւս անգամ)